ՀՏԴ 72.036

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Շ.Կ. Հակոբյան

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱԳՈՅԱՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Դիտարկվում են Ալեքսանդրապոլ (Գյումրի) քաղաքում 19-րդ դարից մինչև խորհրդային տարիները գործած ուսումնական հաստատությունները, հաշվի առնելով դրանց թվակոխումը զարգացման շրջան և տիպերի գոյացումը: Լուսաբանվել են լավագույն հասարակական շինությունների օրինակ հանդիսացող ուսումնական կառույցները, որոնք իրենց կարևոր դերն են կատարում ժամանակակից քաղաքում:

Առանցքային բառեր. *Ալեքսանդրապոլ, ուսումնական հաստատություն, պրոգիմնազիա, գիմնազիա, ծխական դպրոցներ*

Հայկական դպրոցների պատմությունը գալիս է դեռևս հինավուրց ժամանակներից և այն շատ հարուստ և բազմազան է: Չհաշված Հայաստանում գործող օտար լեզուներով դպրոցների, հայկական դպրոցները հիմնվել են հայոց գրերը ստեղծելուց անմիջապես հետո՝ 5-րդ դարից ի վեր: Ուսումնական հաստատություններն իրենց ուրույն տեղն են գտել ճարտարապետական կոթողների կառուցման մեջ և մեծ հռչակ ունեցել տարբեր դարաշրջաններում, տարբեր վայրերում և համալիրներում: Ուշ միջնադարյան ժամանակշրջանի երկրի անկայունության հետևանքներն իրենց ազդեցությունն են ունենում նոր դպրոցների բացման վրա, սակայն 19-րդ դարի սկզբից երկրի տարբեր կետերում, որից մեկն էր ք. Ալեքսանդրապոլը, վերսկսվում է դպրոցների զարգացման մի նոր շարունակական փուլ: Ալեքսանդրապոլի ուսումնական հաստատությունների հիմնման այդ շրջանը սկսվում է 1830-կան թվականներից, երբ հիմնադրվում են եկեղեցիներին կից դպրոցներ, գիմնազիաներ, ուսումնարաններ և այլն: Սկսում են գործել եկեղեցական-ծխական, պետական և մասնավոր դպրոցներ:

Թեև գոյություն ունեն Ալեքսանդրապոլի տվյալ ժամանակահատվածին վերաբերվող ուսումնական հաստատությունների անունների հիշատակումներ՝ տարբեր տեսակի գրական աղբյուրներում և համացանցում, սակայն հստակ հնարավոր չէ գտնել որևէ տեղեկատվական լիարժեք հետազոտություն:

Հոդվածը հիմնված է արխիվային և գիտական գրականության նյութերի հանգամանալի հետազոտման և վերլուծական սխեմայի կառուցման հիման վրա: Փորձ է կատարվել պատշաճ կերպով նկարագրել 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի ուսումնական հաստատությունների բնույթը՝ տեսականորեն վերականգնել այն, ինչ եղել է և տալ վերլուծական պատկեր, բայց և այնպես հնարավոր է լինեն վրիպանքներ: Բազմաթիվ որոնումների արդյունքում հայտնի դարձան հետևալ հաստատությունների իսկությունները:

Պետական դպրոցներ.

- Օլգինյան օրիորդաց պրոգիմնազիա, ապա գիմնազիա,
- Առևտրական ուսումնարան,
- Ալեքսանդրապոլի իգական և արական տարրական ուսումնարաններ,
- Ալեքսանդրապոլի քաղաքային ուսումնարան,
- Տարրական երկսեռ երկաթգծի ուսումնարան,
- Հունական դպրոց:

Մասնավոր դպրոցներ.

- Բոգոմոլովի մասնավոր դպրոց,
- Ալեքսանդր Արաբաջանյանի մասնավոր դպրոց,
- Եվանգուլովայի կարի և ասեղնագործության մասնավոր դպրոց,
- Արամ Իսահակյանի մասնավոր ուսումնարան,
- Գ. Խաչատրյանցի մասնավոր տարրական ուսումնարան,
- Ստեփան Հովհաննեսյանցի մասնավոր ուսումնական հաստատություն:

Ծխական և թեմական դպրոցներ.

- Սուրբ Փրկչի տղայոց կամ Հոգևոր Վիճակային դպրոց, ապա Ալեքսանդրապոլի արական գիմնազիա,
- Ալեքսանդրապոլի «Լուսավորիչ» Խրիմյան դպրոց,
- «Սահականուշյան» օրիորդաց դպրոց,
- Սուրբ Աստվածածնի տղայոց դպրոց,
- Սուրբ Նշանի տղայոց դպրոց,
- Արղության օրիորդաց դպրոց:

1833թ. ի վեր կաթողիկոսարանի միջնորդությամբ տիրացու Հվ. Դավթյանը սկսում է ք.Ալեքսանդրապոլի կրթման գործունեությունը, դրան հաջորդում է Հակոբ աբեղա Շահ Աբասյանի, սկզբնական շրջանում, մասնավոր ուսումնարանը, որտեղ 1841թ. սովորել են հոգևոր և աշխարհական աշակերտները: Դա կարելի է ասել, առաջին Ալեքսանդրապոլի ազգային հոգևոր ուսումնարանը, նույն ինքը Ս Փրկչի տղայոց կամ Վիճակային դպրոցն է, ապա 1843թ. հայտնի են դառնում քահանա Բոգոմոլովի մասնավոր դպրոցը [1], այնուհետև՝ Արաբաջյանի, Խրիմյաց, Արղության, Օլգինյան, Սահականուշյան, Եվանգուլովայի և այլ ուսումնական հաստատությունները:

Սկսելով դիտարկումը պետական դպրոցներից, որոնք չնայած և առաջիններից չեն, սակայն հատկանշական են ըստ ճարտարապետական տեսակետի, հարկ է առանձնացնել ք.Ալեքսանդրապոլի Օլգինյան օրիորդաց գիմնազիան և առևտրական ուսումնարանը, որոնց շինությունների կառուցմանը մեծ ուշադրություն է տրվել և դրանք ճարտարապետական կոթողներ են հանդիսանում և ըստ նշանակության շարունակաբար շահագործվում մինչ այսօր:

Ք.Ալեքսանդրապոլի Օլգինյան օրիորդաց գիմնազիան ներկայում Պուշկինի անվ. թ. 6 միջնակարգ դպրոցն է (նկ.1): Օլգինյան օրիորդաց պրոգիմնազիան սկսել է գործել 1870թ., այնուհետև վերասերվել գիմնազիայի: Այժմյան շինությունը կառուցվել է 1912թ. Գրուզինսկայա փողոցի վրա, որը ժամանակակից տեղագրությունով անվանվում է Թումանյան փողոց [2]:

Նկ. 1. Օլգինյան գիմնազիա

Դպրոցը եռահարկ շինություն է **Լ**-աձև հատակագծով, դասասենյակները հատակագծի կենտրոնական մասում ունեն միակողմանի հատակագծային լուծում, իսկ եզրային մասերում՝ երկկողմանի: Շինության յուրաքանչյուր թևն ունի մեկական աստիճանավանդակ: Թումանյան փողոցի վրա հարող երկայնական ճակատը բաժանված է երեք մասի, որոնցից երկու ծայրամասերը համաչափ լինելով կենտրոնական առանցքին, չնչին առաջ են եկած: Ճակատի երկրորդ և երրորդ հարկերը ռուստավորված են և տրամատված հորիզոնական գորիներով, որոնք երկու կողմից կոտրվում են և շարունակվում մյուս ճակատների վրա: Բակի կողմի ճակատները զուսպ են, միայն երկրորդ և երրորդ հարկերի միջև ընկած հատվածում, ինչպես նաև երրորդ հարկը պսակվում են քիվով: Պատուհաններն առաջին և երկրորդ հարկերում ունեն ուղղանկյուն բացվածք, իսկ երրորդ հարկում, բացի կենտրոնական ներս ընկած հատվածից, շրջանակված են տրամատավորված կամարաղեղներով, եզրափակվելով՝ տերևի տեսքով քանդակազարդ կողպեքներով: Այստեղ կամարաղեղներն անցում են կատարում՝ նստելով հարթ դորիական տեսք ունեցող որմնասյան վրա: Կամարաձև պատուհանների տակ առկա են դեկորատիվ, կիսով չափ պատի մեջ մնացած քարի բազրիքներ: Երկրորդ հարկում պատուհանի լայնքով, իսկ վերջին հարկում պատուհանների տակից ամբողջ ճակատով առաջ են

կարկառվում հորիզոնական ելուստներ՝ կատարելով մասնահատման դեր: Ինչ վերաբերվում է ճակատները եզրափակող հիմնական ավարտական քիվին, ապա այն ունի հարուստ տեսք, տակից՝ ֆրիզային հատվածով, որն իր հերթին կողքից պարուրաձև տեսք ունեցող սուխարիկներով է, իսկ վերևի մասից ամփոփվում է հստակ պարապետով: Գլխավոր մուտքը պսակված է մոնումենտալ շրջանաձև ճակտոնով և որմնասյուներով, որի զրոյական հարթությանը հասնելու համար պետք է բարձրանալ մի քանի աստիճան:

Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանը բացվել է 1902թ. սեպտեմբերի 22-ին Մարքս, Պուշկինսկայա փողոցների խաչմերուկում, ըստ ժամանակակից տեղագրության՝ Ջիվանու, Գայի 1: Այն ղեկավարվում էր Ռուսական կայսրության ֆինանսների նախարարության կողմից: Ուսումնարանը 1902-1906թթ. եղել է երկամյա, 1906-1910թթ.՝ յոթամյա, իսկ 1910-1921թթ.՝ ութամյա: Միշտ ունեցել է նախապատրաստական բաժին: Ուսումնարանի բոլոր հարցերը ղեկավարում էր Ալեքսանդրապոլի քաղաքային խորհրդի կողմից ընտրված հոգաբարձությունը: Այնտեղ վերապատրաստում էին միջին հատուկ կրթությամբ անձնակազմ: Այն նպատակ ուներ նպաստել Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը, որի առումով՝ եզակի, հատուկ կրթական հաստատություն էր [3]: 1921թ. ք.Ալեքսանդրապոլի առևտրային դպրոցը վերացվեց, հետագայում այդ շենքում գործել է մանկավարժական ինստիտուտը: Քչերին է հայտնի, որ այս կառույցում էր նաև նախատեսվել բացել Կարմիր Խաչի լազարեթը [3]: Վերափոխություններ կրած առևտրական ուսումնարանի շենքում այժմ գործում է ք.Գյումրիի Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոնը: Սկզբնական շինությունից պահպանվել է առաջին հարկում կամարակապ առաստաղով մի հատված, որը սկզբում ըստ հատակագծի գտնվել է ուսումնարանի տնօրենի բնակելի տարածքին կից (նկ. 2): Այս երկու հաստատությունների շենքերը կարևոր դեր են ունեցել, ոչ միայն հիշատակվող դարաշրջանում, այլ նաև արդի ժամանակներում: Դրանք կազմում են քաղաքի ճարտարապետության ուրույն մասնիկը, որոնք հատկանշային լինելով՝ պահպանվել են և թելադրող դոմինանտ դարձել:

Նկ. 2. Առևտրական ուսումնարանի 20-րդ դարից պահպանված կամարակապ առաստաղով վերանորոգված սենյակ

Ինչ վերաբերվում է **Ալեքսանդրապոլի քաղաքային ուսումնարանին,** ապա այն աշխատել է 1870-կան թվականներից [4], **տարրական երկսեռ երկաթգծի ուսումնարանը** 1905թ. [5], իսկ **Հունական դպրոցը** հիշատակվում է 1880թ. [6]: Սրանք բացվել են տարբեր կառույցներում՝ տարածքները վարձելով:

Ш.К.Акопян

ФОРМИРОВАНИЕ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЙ АЛЕКСАНДРОПОЛЯ ДОСОВЕТСКОГО ПЕРИОДА И ИХ АРХИТЕКТУРА

Рассматриваются функционирующие в г.Александрополь (Гюмри) в период с 19-го века до советских времен учебные заведения, принимая во внимание их вступление в период развития и формирование типов. Изучаются учебные заведения, являющиеся лучшими образцами общественных зданий, которые играют важную роль в современном городе.

Ключевые слова: *г.Александраполь, учебное заведение, прогимназия, гимназия, приходская школа*

Sh.K.Hakobyan

FORMATION OF THE EDUCATIONAL INSTITUTIONS OF ALEXANDROPOL IN THE PRE-SOVIET PERIOD AND THEIR ARCHITECTURE

Educational institutions, which were active from the 19th century to pre-soviet period in the city of Alexandropol (Gyumri) are considered, including their accession into the period of development and formation types. Furthermore, educational institutions, which are examples of the best public buildings that play a very important role in the modern city, were explained.

Keywords: *Alexandropol, educational institution, progymnasium, gymnasium (school), parish school*

Գրականություն

1. **Մաթևոսյան Մ.Հ.** Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին. - Երևան: Հայպետուսմանկհրատ, 1964. - 448 էջ:
2. ՀԱԱ, ֆոնդ 299, ցուցակ 10:
3. ՀԱԱ, ֆոնդ 299, ցուցակ 2:
4. ՀԱԱ, ֆոնդ 19, ցուցակ 1, գործ 599:
5. ՀԱԱ, ֆոնդ 19, ցուցակ 1, գործ 597:
6. ՀԱԱ, ֆոնդ 19, ցուցակ 1, գործ 600:

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակում:

Հակոբյան Շուշան Կարենի, դասախոս, *(ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. Ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, կրտսեր գիտաշխատող, ՃՏՊԾՎՎԳԱԿՊ ամբիոն, հայցորդ, (+374)91001989, shushan.hch@gmail.com:*

Акопян Шушан Кареновна, преподаватель, *(РА, г.Ереван) – НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. ак. Ал. Таманяна, м.н.с., кафедра ТАРРИАНИИиИ, соискатель, (+374)91001989, shushan.hch@gmail.com.*

Hakobyan Shushan Karen, lecturer, *(RA, Yerevan) - NUACA, Problem laboratory of architecture and construction after Al. Tamanyan, Chair of Theory of Architecture, Restoration and Reconstruction of Historical-Architectural Heritage, Fine Arts and History, junior researcher, applicant, (+374)91001989, shushan.hch@gmail.com.*

Ներկայացվել է՝ 11.11.2016թ.
Ընդունվել է տպագրության՝ 14.11.2016թ.